«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտող ուսուցիչ՝ Փառանձեմ Գևորգյան
անուն, ազգանուն

Արմավիրի Մ. Սիլիկյանի անվան N 6 հիմն. դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ ԱՆի Իսկանդարյան

Բովանդակություն

Ներածություն _____էջ 2-4

Գլուխ 1. _____ էջ 5-6

Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին

Գլուխ 2. _____էջ 7-9

Երեխաների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից

մանկավարժության մեջ

Գլուխ 3 _____էջ 10-13

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները

երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում

Գլուխ 4 _____էջ 14-15

Երեխաների պաշտպանությունը բռնությունից դպրոցում

Եզրակացություն _____էջ 15-16

Առաջարկություն_____ էջ 16-17

Գրականության ցանկ_____էջ 17-18

Ներածություն

Մարդ արարածը ծննդյան առաջին իսկ օրվանից ոտք է դնում դեպի մեծ, հրաշալի ու դժվարություններով լի մի ինստիտուտ, որը կոչվում է աշխարհ:

Ընտանիքը, դպրոցը և համայնքը այդ աշխարհի կարևոր և անբաժան մասն են կազմում: Նրանց աշխատանքը պետք է լինի փոխկապակցված և ուղղորդված՝ երեխայի համար ներդաշնակ և խոստումնալից կյանք ապահովելու համար :

Եթե վերը նշվածներից մեկն ու մեկը թերանա իր գործում մի ամբողջ մարդկային կյանք կարող է խեղաթյուրվել:

Գաղտնիք չէ, որ հազարավոր երեխաների ճակատագրեր խեղաթյուրվում են հենց դպրոցում, այն հաստատությունում, որը հիմքն է հանդիսանում երեխայի գիտելիքի ու հմտության, աշխարհայացքի ու արժեքների, իր ինքնաճանաչման և ինքնադրսևորման ձևավորման: Դպրոցներում երեխայի իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը ոչ մի դեպքում չպետք է ոտնահարվեն, որպեսզի նա, որպես վերջնարդյունք դառնա այն լիարժեք քաղաքացին, ով կծառայի իր պետությանը ու պիտանի մարդ կդառնա աշխարհում:

Դպրոցներում Ուսումնական գործընթացը բազմակողմանի և բարդ գործընթաց է, որի իրականացման ընթացքում հաջողության հասնելու ամենակարևոր գործոնը մարդկային հարաբերությունն ու առողջ մթնոլորտի ստեղծումն է ուսումնական հաստատությունում կամ դրանից դուրս:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Սովորողները, իրենց պարտականությունների հետ զուգընթաց ունեն նաև անքակտելի իրավունքներ, որոնք երբեք և ոչ մի դեպքում չպետք է ոտնահարվեն: Սովորողներից յուրաքանչյուրը ունի սխալվելու և իր սխալները ուղղելու իրավունք: Սակայն այդ սխալները երբեմն լինում են անդառնալի, երբ իրենք պատճառ են դառնում իրենց հետ միասին կողք-կողքի նստող մեկ այլ երեխայի կյանքի և անվտանգության սպառնալիք:

21-րդ դարում բռնության կիրառման օրինակներ կան երեխաների օգտագործած խաղերի, ֆիլմերի և մուլտֆիլմերի մի շարք դրվագներում, որը միանշանակ արտացոլվում է նրանց խոսքի, վարվելակերպի, հայացքի մեջ:
Հետագայում նրանք են կիրառում բռնություն այս կամ այն երեխայի հանդեպ:
Բռնությունը կիրառվում է

- Հասակակիցների կողմից
- Ուսուցչի կողմից
- Տնօրինության կողմից

Ուսուցչի կողմից բռնության դեպքերը արձանագրվում են ամբողջ աշխարհում Ուսուցիչների աշխատանքը բարդ է և տարեց-տարի ավելի խրթին է դառնում հարմարվել նոր սերունդների պահանջներին ու փոփոխություններին:
Սակայն անընդունելի են նրանց կողմից որևէ անհանդուրժողականության կամ բռնության դրսևորումները, որոնք, ցավոք սրտի, շատ են:

Հետազոտության խնդիրը

Հետազոտության խնդիրն այն է, որ շատ օրենքներ և ծրագրեր կան, որոնք միտված են պաշտպանելու երեխաների իրավունքները, սակայն դրանք չեն գործում շատ երկրներում: Ըստ վիճակագրության ամեն տարի 246 միլլիոն երեխա է ենթարկվում դպրոցում բռնության : Շատ հաճախ նման երեխաները ենթարկվում են իրավունքների ոտնահարման, ծաղրանքի, չհասկացվածության և բռնության թե իրենց հասակակիցների և թե ուսուցիչների և տնօրինության կողմից:

Հետազոտության նպատակը

Վեր հանել, առաջարկել և ձեռնարկել միջոցներ երեխաների իրավունքները, ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու և բռնության դեպքերը նվազեցնելու նպատակով:

Գլուխ 1. Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին

1989թ.-ի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ը ընդունեց <<Երեխայի իրաունքների մասին>> կոնվենցիա:

Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակել է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք :

Սույն Կոնվենցիայի նպատակների համար երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ:
Ըստ Երեխայի իրավունքների հռչակագրի՝ «երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո» :
Այնտեղ ասվում է, որ երեխան լիարժեք կերպով պետք է նախապատրաստվի հասարակության մեջ անհատական կյանքով ապրելուն և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների և հատկապես խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության և համերաշխության ոգով:

Երեխային այդպիսի հատուկ հոգածություն տրամադրելու անհրաժեշտությունը նախատեսված է Երեխայի իրավունքների 1924թ. Ժնևի հռչակագրում և 1959թ. նոյեմբերի 20-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած Երեխայի իրավունքների հռչակագրում և ճանաչված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (մասնավորապես 23 և 24-րդ հոդվածներում):

<<Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին>> https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503

Ուստի, կարող ենք ենթադրել, որ բոլոր այն երկրները, որոնք առաջնորդվում են ՄԱԿ-ի ստեղծած Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով, պարտավորվում են հանձն առնել ցանկացած իրավունքի խախտման հայտնաբերմանն ու կանխարգելմանը:

Սակայն այդ ամենը չի իրականացվում հավուր պատշաճի ՝ հաշվի առնելով բռնության դեպքերի թիվը տարբեր երկրներում ըստ կատարած ուսումնասիրությունների :

Գլուխ 2 <<Երեխաների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ >>

Այսօր մանկության արժեքը, դրա պաշտպանության անհրաժեշտությունը հիմնվում են 1989 թ. ընդունված միջազգային փաստաթղթի <<Երեխաների իրավունքների մասին >> ՄԱԿ կոնվենցիայի վրա:
Քաղաքակիրթ մարդկությունն այս փաստաթղթի ընդունմանը հասավ քայլ առ քայլ:

Կոնվենցիայում շարադրվում են երեխաների իրավունքները, հատուկ կարիք ունեցող երեխաների իրավունքները, մեծ տեղ է տրվում դպրոցական կարգապահությանը՝ որպես երեխաների անվտանգության երաշխիք: Մի շարք հոդվածներում պահանջվում են հավասար պայմաններ ստեղծել կրթություն ստանալու գործընթացում և այլն:

Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 1992թ.-ի հունիսի 1-ին: Այն մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ կրթության գործընթացի հումանացման գործում:

Ի տարբերություն երեխաների իրավունքների մասին նախկին փաստաթղթերի, կոնվենցիան իրավականորեն պարտավորեցնող գործիք է և ստորագրող երկրների կառավարություններին պարտավորեցնում է կարևորել երեխաների հիմնահարցերը:

Այն ընդգծում է, որ մանկությունը անպաշտպան է և մեծերի օգնության ու աջակցության կարիք ունի, ուստի ավագները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար, և կոչ է անում հաշվի առնել, որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկական տարիներին:

Կոնվենցիայում շարադրվում են երեխաների իրավուքները, հատուկ կարիք ունեցող երեխաների իրավունքները, մեծ տեղ է տրվում դպրոցական կարգապահությանը՝ որպես երեխաների անվտանգության երաշխիք: Մի շարք հոդվածներում պահանջվում է մեկնարկային հավասար պայմաններ ստեղծել կրթություն ստանալու գործընթացում:

Ըստ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի երեխան պետք է պաշտպանված լինի ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից,

մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը:

Ժամանակակից օրենսդրության մեջ երեխայի իրավունքները դիտվում են որպես մարդու իրավունքների բաղկացուցիչ մաս: Մասանվորապես մեր օրենքն ամրագրում է երեխայի կյանքի, անվան և քաղաքացիության, առողջության պահպանման, անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու, բռնությունից երեխաների պաշտպանության, երեխաների մտքի, խղճի ազատության, կրթության, ընտանիքում ապրելու, ընտանիքում երեխաների իրավունքները պաշտպանելու, աշխատանքի, հանգստի, միավորումներին անդամակցելու, անվտանգության ապահովման, պատվի և արժանապատվության պաշտպանության և այլ իրավունքներ:

Կրթության ոլորտը պետք է պահպանի երեխայի իրավունքներն ու երեխային տա դրական փորձ , որը կօգնի ձևավորել ինքնավստահություն և օգտվել իր ազատությունից ապագա կյանքում:

Դպրոցը պետք է երեխայի նկատմամբ լինի բարյացակամ: Երեխան պետք է հետաքրքրասիրություն դրսևորելու, հարցեր տալու և պատասխաններ ստանալու , վիճելու և համաձայնվելու, ինքն իրեն ստուգելու և սխալներ գործելու, իմանալու և չիմանալու, ստեղծագործելու և անմիջական լինելու և հարգվելու իրավունք ունենա:

Մշտապես բացակայող, երկտարեցի, դպրոցից դուրս մնացած երեխաների հետ զրույցները ցույց են տվել, որ նրանք բոլորն էլ զգացել են, որ իրենց գոյությունը դպրոցում անցանկալի է: Նրանք ասում են, որ ուսուցիչները իրենց ոչ միայն չեն սիրում, այլև շատ հաճախ ծաղրում են, նվաստացնում, դասընկերներն իրենց հետ չեն խաղում, որքան էլ սովորում են 4 գնահատականից բարձր չեն ստանում:

Եթե դպրոցում այսպիսի մթնոլորտ տիրի, երեխաները կշարունակեն դպրոցից դուրս մնալ, իսկ սա կհանգեցնի ինքնամեկուսացման:

Կարող ենք արձանագրել, որ դպրոցներում երեխայի իրավունքի ոտնահարում կարեկի է համարել նաև արհամարհանքը: Երեխաները իրենց զգում են անտեսված և իրենք ել սկսում են անտեսել ուսուցչին, դպրոցը և իր պահանջները:

Այսպիսով, ցանկացած պարագայում պետք է հիշել,որ երեխան մարդ է՝ իր բնավորության ուրույն գծերով , զգացմունքներով և իրավունք ունի պահանջել հարգել իր պահանջմունքներն ու հետաքրքրությունները:

<<Երեխաների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ >> Ա. Թոփուզյան

https://cyberleninka.ru/article/n/problema-zashchity-prav-detej-v-sovremennoj-pedagogike/viewer .

Գլուխ 3 ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերն ընկած են միջազգային իրավաբանության հիմքում: Այդ իրավաբանությունն հստակ է. երեխաները յուրաքանչյուր հասարակության և պետության ապագան են, ուստի պետք է գտնվեն հատուկ և մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու և մեծանալու երեխայի կարևորագույն իրավունքը: Սա է, որ պետք է կազմի ժամանակակից յուրաքանչյուր պետության գործունեության առաջնահերթ առարկան: Երեխաներն իրենց տարիքային, մտավոր և ֆիզիկական զարգացվածության առանձնահատկություններով համարվում են հատուկ խումբ և ունեն մշտական հոգածության ու պաշտպանության կարիք: Իրականում, երեխաների պաշտպանվածության մակարդակը տարբերվում է երկրից երկիր, իսկ աշխարհի տարբեր մասերում ապրող երեխաները կա'մ լիարժեք պաշտպանված են իրենց բոլոր իրավունքների առումով, կա'մ էլ անգամ կյանքի իրավունքի առումով չունեն պաշտպանվածություն:

Թեև ՀՀ-ում պաշտպանվում է ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը, այնուամենայնիվ, 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող մանկատներում խնամվում է 635 երեխա, այդ թվում՝ համակարգի երեք մասնագիտացված մանկատներում խնամվող 350 երեխա և 18 տարին լրացած 100 անձ: Նախարարության ենթակայության երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամվում է 510 երեխա12: Ավելին, փակ և կիսափակ հաստատություններում երեխաների իրավունքների խախտումները մշտապես արձանագրվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից պլանային և արտահերթ այցերի ընթացքում: Այսպես, Պաշտպանի՝ 2014թ. «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. Համակարգային վերլուծություն» արտահերթ զեկույցում14 հատուկ անդրադարձ է կատարվել փակ և կիսափակ հաստատություններում երեխաների իրավունքների սահմանափակմանը և երեխաների նկատմամբ

բռնությունների կիրառման դեպքերին: Ըստ այդ զեկույցի՝ որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի Կամընտիր արձանագրությամբ նախատեսվող ազգային կանխարգելման մեխանիզմ՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես իրականացրել է կանոնավոր մշտազննում և այցեր մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններ, մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների ենթակայության տակ գործող հատուկ հանրակրթական դպրոցներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ և մանկատներ: Մշտազննման արդյունքում մշտապես արձանագրվել է, որ գրեթե բոլոր գիշերօթիկ հաստատությունների սաները հայտարարել են հանրակրթական դպրոցներում իրենց հանդեպ խտրական վերաբերմունքի մասին, որն իրենց նկատմամբ անգամ վատ վերաբերմունքի և արժանապատվությունը նվաստացնելու դրսևորումներ ունի»: Այցերի ընթացքում արձանագրվել են նաև երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի, այդ թվում՝ ծեծի, բռնության դրսևորումներ15: Հաստատություններից մեկում երեխաները պատմեցին, որ լոգանք ընդունում են միայն այն երեխաները, ովքեր գիշերում են հաստատությունում նաև շաբաթ և կիրակի օրերին: Նրանք այցի ընթացքում արձանագրել են, թե ինչպես է դասապատրաստման սենյակներից մեկում դաստիարակն ապտակել երեխաներից մեկին: ԲԿԱՄ փորձագետների՝ դասասենյակ մտնելուն պես ներկաները ժխտել են տվյալ փաստը, իսկ դաստիարակը պարզաբանել է, թե քաշել է երեխայի հագուստից ու հրահանգել նստել տեղը: Առանձնազրույցի ընթացքում երեխաներն հայտարարել են իրենց նկատմամբ բռնության այլ ձևերի կիրառման մասին: (օր՝ դասերի ժամանակ քանոնով հարվածել, հագուստից քաշել, հրել և այլն): Հատկանշական է, որ երեխաներն առանձնազրույցների ժամանակ արդարացնում էին դաստիարակների նման պահվածքը, ընդունելի համարում ապտակելը, հարվածելը, քանի որ դրանք ընկալում էին որպես դաստիարակման միջոցներ:11 Ըստ հաստատության սաների՝ իրենց սպորտային համազգեստները, վերնազգեստները, որոնք հանձնվում են լվացքատուն, երբեմն չեն վերադարձվում: Երեխաները նշում էին նաև հաստատությունում գողության հաճախակի դեպքերի

մասին (հեռախոսներ, հագուստ և գումար): Երեխաները բարձրաձայնել են նաև տրամադրվող հիգիենիկ պարագաների սակավության մասին:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին գրանցվել են նաև փակ կամ կիսափակ հաստատություններում երեխաների հարկադիր աշխատանքի և սեռական բռնության դեպքեր: Այսպես, Ս.Ու.-ն դատապարտվել է 10 տարի ժամկետով ազատազրկման երեխաներին հարկադիր աշխատանք կատարելուն հարկադրելու և հատուկ դպրոցի սաներից մեկի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար: Համաձայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի՝ դատապարտյալը լինելով Նուբարաշենի թիվ 18 հատուկ դպրոցի փոխտնօրեն, շահադիտական նպատակներով ստիպել է նույն դպրոցի սաներին զբաղվել մուրացկանությամբ մոտ 2 տարի շարունակ, ինչպես նաև սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել 14 տարին չլրացած սաներից մեկի նկատմամբ: Հատկանշական է, որ դատավարությունների ժամանակ ցուցմունք տվող վկաները հիշատակում էին նաև տվյալ հաստատությունում բռնությունների դրսևորման այլ դեպքերի մասին: Մեկ այլ դեպքում Լ.Ա.-ն, դատարանի կողմից մեղավոր է ճանաչվել հատուկ օժանդակ դպրոցի սաների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար և նախատեսված հանցանք կատարելու մեջ և դատապարտվել 2 տարի ազատազրկման (հետագայում պատիժը Վերաքննիչ դատարանը խստացրել է՝ դարձնելով ազատազրկում 3 տարի ժամկետով): Համաձայն դատավճռի՝ դատապարտյալը, աշխատելով Նուբարաշեն թիվ 11 հատուկ օժանդակ դպրոցում որպես հայերեն լեզվի ուսուցիչ, 2 տարի շարունակ կատարել է անառակաբարո գործողություններ 16 տարին չլրացած դպրոցի աշակերտուհիների նկատմամբ19: «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում հայտնաբերված չարաշահումների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2010-2014 թվականների ընթացքում, պարբերաբար բռնություն է գործադրվել, տնօրենի բնորոշմամբ, «կարգազանց» անչափահաս սաների նկատմամբ՝ նրանց պատճառելով հոգեկան ուժեղ տառապանք: Տուժած երեխաների թիվը հասնում է 14-ի:

Նշվածի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի տարեկան հաղորդման մեջ առաջարկել է հստակեցնել հաստատություններ

երեխաների ընդունելության չափորոշիչները՝ բացառելով միայն աղքատության պատճառով երեխաներին հաստատություն տեղավորելը, ստեղծել մասնագիտացված համայնքահեն կենտրոններ, որոնք աջակցություն կցուցաբերեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ կանխարգելելով երեխաների մուտքը հաստատություններ:

Կարող ենք եզրակացնել , որ ՀՀ-ում արձանագրված տվյալ դեպքերը տարիների շարունակական աշխատանք են, որոնց առկայության դեպքում երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերը կհայտնաբերվեն և կպատժվեն խստագույնս՝ լինելով բոլոր ուսումնական հաստատություններում բռնությունը կանխարգելելու միջոց:

Գլուխ 4 Երեխաների պաշտպանությունը բռնությունից դպրոցում

Այսօր յուրաքանչյուր երեխա իրավունք ունի գնալ դպրոց առանց վախի: Եթե դպրոցները ապահովեն որակյալ, ներառական և ապահով կրթություն, երեխաները կարող են սովորել ընկերական հարաբերություններ ստեղծել և ձեռք բերել կարևոր հմտություններ, որոնք անհրաժեշտ են սոցիալական իրավիճակներում կողմնորոշվելու համար:

Լավագույն պայմանները ապահովելու դեպքում դպրոցը երեխայի համար կերտում է խոստումնալից ապագայի ճանապարհ:

Սակայն, ցավոք սրտի ամբողջ աշխարհում հարյուրավոր աղջիկների և տղաների համար դպրոցն այն վայրն է, որտեղ նրանք ենթարկվում են բռնության, ծաղրանքի, ոտնձգության, խոսքային վիրավորանքների, սեքսուալ շահագործման և բռնության , ֆիզիկական պատժի, ստորացման այլ ձևերի, որոնք կարող են իրականացվել հասակակիցների, ուսուցչի և անգամ դպրոցի տնօրինության կողմից:

Շատ երեխաներ նաև ենթարկվում են բռնության խմբավորումների կողմից՝ զենքով կամ ծեծով:

Բռնությունը դպրոցում կարող է ունենալ շատ լուրջ հետևանքներ երեխայի ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա:

Երեխաները, ովքեր ենթարկվում են բռնության հնարավոր է ունենան ֆիզիկական վնասվածքներ, սեռական ճանապարհով փոխանցված հիվանդություններ, դեպրեսիա, անհանգստություն, հետտրավմատիկ ստրեսային խանգարում և ինքնասպանության փորձ կատարելու մտքեր:

Հնարավոր է նաև , որ նրանք սկսեն դրսևորել ռիսկային, ագրեսիվ, հակա-սոցիալական պահվածք:

Երեխաները, ովքեր մեծանում են բռնություն կիրառող շրջապատում, ավելի մեծ հավանականությամբ են դառնում նաև դրա կրկնօրինակողը՝ բռնության նոր զոհեր ստեղծելով:

Եվ վերջապես դպրոցում բռնությունը կարող է նվազեցնել դպրոցներում հաճախելությունը, հանգեցնել ավելի ցածր ուսումնական կատարողականության և աճեցնել դպրոցը թողելու, հեռանալու ռիսկերը:

Այս ամենը ունի աղետալի հետևանքներ երեխաների հաջողության և առաջխաղացման, ինչպես նաև իրենց ընտանիքների և համայնքի բարօրության վրա:

Ըստ Յունիսեֆ-ի արձանագրած փաստերի, պատկերը ամբողջ աշխարհում հետևյալն է՝

- 13-15 տարեկան աշակերտների ուղիղ կեսը (մոտ 150 միլլիոն) տեղեկացնում են, որ ենթարկվել են բռնության հասակակիցների կողմից դպրոցի ներսում և դրա շրջկայքում:
- 13-15 տարեկան երեխաների մեջ 3-ից 1-ը փաստում է, որ ենթարկվել են հաճախ ծաղրանքի
- Շուրջ 720 միլիոն դպրոցահասակ երեխա ապրում է այն երկրներում, որտեղ նրանք օրենքով լիովին պաշտպանված չեն դպրոցում մարմնական պատժից:

2005-2002 թվականների ընթացքում Միավորված ազգերի կազմակերպությունը ստուգել է հարձակումների ավելի քան 13.900 միջադեպ:

Զեկույցը փաստում է, որ զենքերի՝ մասնավորապես՝ դանակի ու ատրճանակի կիրառմամբ իրականացրած բռնությունը շարունակում է կյանքեր խլել: Նաև նշված է, որ տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց դաժան, վիրավորական, նվաստացնող բովանդակությամբ բուլինգը հնարավոր է դարձել ընդամենը մեկ կոճակի սեղմամբ:

Protecting children from violence in school
https://www.unicef.org/protection/violence-against-children-in-school

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարը նորմարտահրավերներն է նետում մարդկությանը , դրանցից կարևորագույնը երեխաների համար ներդաշնակ աշխարհ կառուցելու խնդիրն է, աշխարհ, որը չնայած տեխնիկայի զարգացման գրոհին, կմնա մաքուր, անբասիր և ապահով:

Այսինքն՝ երեխաների իրավունքների պաշտպանությունը նոր իմաստ է ստանում, ուստի անհրաժեշտ է հստակեցնել և զարգացնել այդ բնագավառի իրավական դաշտը:

Երեխաների հետ աշխատանքը բարդ է և բազմաբնույթ: Երեխաները ունեն փխրուն ներաշխարհ ցանկացած տարիքում: Երեխաների հոգին նման է մի մեծ տիեզերքի, քանզի կիսում է նրա հետ առեղծված լինելու արժանիքը:

Այդ տիեզերքը պահող ուժը ձգողականությունն է, իսկ երեխային ձգտումը դեպի քեզ պահող ուժը սերն է …….

Առաջարկություններ

Առաջարկում եմ

Կրթական օջախները զինել այնպիսի մասնագետներով, ովքեր կբացահայտեն և կկանխարգելեն բռնության ցանկացած դեպք:

· Ապահովել համապատասխան օրենսդրության առկայությունը և պահպանումը

· Ապահովել դպրոցներում բռնության կանխարգելման և խնդրի համապատասխան լուծման մեթոդների առկայությունը

· Աջակցել բռնության մասին բարձրաձայնող աշակերտներին և դասասենյակներում ու համայնքներում փոխել բռնության մշակույթը

· Դպրոցում անվտանգություն ապահովող հաջողված լուծումներին ուղղված ներդրումներն ավելի արդյունավետ ու թիրախավորված դարձնել

· Հավաքագրել դպրոցներում կատարվող բռնության մասին տվյալները ավելի արդյունավետ ու տեսակավորված կերպով:

Պետք է քաջալերել ողջ աշխարհի երիտասարդներին՝ բարձրաձայնել դպրոցներում և դրանց շուրջ կատարվող բռնության մասին՝ բռնությանը վերջ դնելու նպատակով և մեզ պատմելու, թե ինչպես են իրենք միասին աշխատում և ինչ լուծումներ են առաջարկում բռնությունը դպրոցից մեկընդմիշտ վերացնելու համար:

Վերջապես զոհ կարող է լինել ոչ միայն իմ հարևանությամբ ապրող երեխան, այլև իմ սեփական երեխան, քանզի բոլորը մեր երեխաներն են:

Օգտագործված գրականության ցանկ

<<Երեխաների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ >> Աիդա Թոփուզյան

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ Երևան 2017

Protecting children from violence in school

https://www.unicef.org/protection/violence-against-children-in-school